ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմեն Զաքարյան Գագիկի Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/300 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	DAJINPJ	Պայուսակ դպրոցական/150 հատ/ /գրենական պիտույքներ/ Դպրոցականի պայուսակը ներսում բաժանված նվազագույնը 2 դարակների, արտաքինից ունենա նվազագույնը 2 դարակ, 2-4-րդ դասարաններում սովորող տղաների և աղջիկների համար: Պատրաստված էկոլոգիապես մաքուր, բարձրորակ, չթրջվող կտորից, ամուր, խիտհումքից /100% պոլիէստեր, պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ/, զերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, մեջքի հատվածում՝օրթոպեդիկ: Պայուսակի դարակների փականը /ցեպը/ և գլխիկը լինի մետաղական: Երկրաչափական չափսերը՝ 20սմx35սմx45սմ: Պայուսակի աջ և ձախ կողքերին լինեն հատուկ տեղեր նախատեսված շշով հեղուկի համար, ինչպես նաև լինեն կապիչներ հեղուկի շիշը իրենց տեղերում ամրացնելու համար: Պայուսակի վրա նախատեսված լինի ձեռքով բռնելու հարմարավետ բռնակ, ինչպես նաև փոքր բռնակ դպրոցական սեղանի կախիչից կախելու համար:Ուսերինկրելու հնարավորություն ուսագոտիների տեսքով, որոնց երկարությունը հնարավոր լինի կարգավորել: Ուսագոտիներում լինեն օգտագործված հատուկ հարմարավետ առաձգական փափուկ ներդիրներ: Պայուսակները չունենան կպչուն ժապավեններով ամրակներ (լիպուչկա), այլ օգտագործվեն էկոլոգիապես մաքուր նյութերից պատրաստված պլաստմասսե առաձգական մեծ

		ամրությամբ օժտված ամրակներ: Պայուսակի ներքևի մասում լինի պլաստմասսե 4 ոտիկ: Պայուսակի մեջքի և առջևի հատվածները ունենան չճկվող ամուր ներդիրներ: Տղաների պայուսակների գերակշող գույնը՝ կապույտ և սև: Աղջիկների պայուսակների գերակշողգույնը լինի վարդագույն և մանուշակագույն: Տղաների և աղջիկների պայուսակների քանակը նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ: Լրակազմը/պայուսակ/ իր մեջ ներառում է • Տետր- 48թերթանի վանդակավոր, նկարազարդ, լուսանցքները՝ աջ և ձախ կողմերը կարմիր գույնով գծված: Տետրի կազմի վրա լինեն տողեր նախատեսված աշակերտի տվյալները լրացնելու համար, քանակը՝ 2 հատ, չափը՝17x20 սմ: • Տետր 48 թերթանի տողանի, նկարազարդ, լուսանցքները՝ աջ և ձախ կողմերը կարմիր գույնով գծված, տետրի կազմի վրա լինեն տողեր նախատեսված աշակերտի տվյալները լրացնելու համար, քանակը՝ 2 հատ, չափը՝17x20սմ: • Գրիչ - կարմիր և կապույտ գույնի, գրիչի երկարությունը՝ 13-14սմ, ռետինե կամ սիլիկոնե բռնակով, 07մմ սայրով, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ; Քանակը՝ կապույտ գույնից 3 հատ, կարմիր գույնից 1հատ: • Սրիչ՝աղբամանը շարժական կափարիչով, 2 բնիկով՝ լայն և նեղ, պլաստմասսայե, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ: Քանակը 1 հատ: • Քանոն՝ փայտե, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, գծանշումների մակերեսը ուռուցիկ, երկարությունը՝ 30 սմ: Քանակը 1 հատ: • Մկրատ՝ ծայրերը կլորացված, ինչը ապահովելու է երեխայի անվտանգությունը: Առաձգական պլաստմասայե բռնակով, մկրատի կտրող մասը չժանգոտվող մետաղից, մկրատի երկարությունը 13-14սմ: Քանակը 1 հատ: • Ռետին՝ սև գույնի, չափսերը 4x3x1,5սմ, էկոլոգիապես մաքուր ու փափուկ հումքից պատրաստված, փաթեթավորված: Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ: Քանակը 1 հատ, • Գունավորթուղթ – 16 թերթանի, երկկողմանի գունավոր, երկրաչափական չափսերը 29x21սմ, տարբեր գույների, տետրի տեսքով կարված, քանակը՝ 1հատ: • Սոսինձ- չոր, գլանաձև, շարժական կապարիչով, քաշը 15 գրամ, նախատեսված թուղթ սոսնձելու համար, հակաալերգիկ, /պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ, նվազագույնը 1 տարվա պահպանման ժամկետով

		/,քանակը 1 հատ։ • Նկարչական ալբոմ - 32 թերթ, հաստ ստվարաթղթե կազմով, Կազմը և նկարչական թղթերը ամրացված գալարով։ Նկարչական ալբոմի թղթերը պատրաստված լինեն նվազագույնը 90 գրամանոց թղթերից, քանակը 1 հատ։ • Գունավոր մատիտներ – Նվազագույնը 18 գույն /ոչերկկողմանի/, 6 անկյուն կամ եռանկյունե կտրվածքով։ Մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից կամ պլաստմասսե, Մատիտների երկարությունը նվազագույնը 18սմ, փափկությունը՝ HB,պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից։ Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ։ Քանակը 1 տուփ։ • Գրչատուփ-Պատրաստված լինի չճկվող ամուր հումքից։ Բացվի գրքաձև՝ 180 աստիճան, փականը /ցեպ/ և գլխիկը լինեն մետաղյա։ Երկրաչափական չափսերը՝ երկարությունը նվազագույնը 20սմ, լայնությունը՝նվազագույնը 12մ, բարձրությունը նվազագույնը 2.5սմ։ Գրչատուփի բացված կողմերի վրա ներսից կարված լինեն ռեզինե ժապավեններ՝ բաժանարարներով, նախատեսված գրիչների, մատիտների, ռետինի, մկրատի, սրիչիև այլ գրենական պիտույքները ամրացնելուև տեղավորելու համար։Պատրաստված էկոլոգիապես մաքուր, ամուր, որակով հումքից, Պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ։ Քանակը 1 հատ։ Բնութագրի հետ կապված փոփոխությունները, առաջարկությունները քննարկել և համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП: Армен Закарян Гагикович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/300 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		